ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԿԱՊՈՒՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

ՀՏԴ 719
ԳՄԴ 79.0
Կ 294

Հեղինակ **Սամվել Կարապետյան**
Գիտական խմբագիր **Էմմա Աբրահամյան**
Խմբագիր-սրբագրիչ **Հասմիկ Հովհաննիսյան**
Համակարգչային ձևավորող **Արմեն Գևորգյան**
Չափագրությունների հեղինակ **Աշոտ Հակոբյան**

Սամվել Կարապետյան
Կ 294 **Կապուտան գյուղի պատմական հուշարձանները.** / Ս. Կարապետյան.- Եր.: ՀԵՈՒ հիմնադրամ, 2014 - 12 էջ:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում սույն գրքույկի հովանավոր հարգարժան Վարդան Հարությունյանին

Հայրենիքն անհուն նվիրումի և ոգեղենության միակ աղբյուրն է, ազգերի գոյությունն իմաստավորած գերակա արժեքը:

Հայրենիքն ակունքն է մարդուն տրված ազնվագույն և ամենից անկեղծ զգացումի՝ հայրենասիրության, որի խմորիչն էլ հայրենաճանաչությունն է:

Այո՛, սիրելու համար պետք է ճանաչել, ուստի և Հայրենիքը սիրելու համար պայման է, որ անհատը լինի հայրենաճանաչ:

Ազգերի պատմությունը ցույց է տվել, որ բազում մահաբեր խութերով դարերը պատվով են հաղթահարել այն ազգերը, որոնց հայրենաճանաչությունը բյուրեղացել և վերածվել է Հայրենիքի պաշտամունքի, որի պայմաններում հաղթանակն ապահովված է եղել նույնիսկ անկախ ուժերի քանակական անհամաչափությունից:

Ոգեղեն արժեքներով առաջնորդվող և ըստ այդմ ուժեղ, իսկ սրանով էլ պայմանավորված՝ երջանիկ հասարակություն ունենալու համար անքննելի անհրաժեշտություն է, որ նույն հասարակության յուրաքանչյուր մասնիկը լինի հայրենաճանաչ, որն էլ բնականորեն սկիզբ է առնում հարազատ ծննդավայրի ճանաչողությունից:

Հուսով ենք, որ սույն գրքույկն իր համեստ ներդրումը կունենա մեզանում այնքան անհրաժեշտ հայրենաճանաչության խորացման գործի մեջ:

Կեցցե՛ն մեր հայրենաճանաչ հայրենակիցները, փա՛ռք սրբազան Հայրենիքին:

ՀՏԴ 719
ԳՄԴ 79.0

ISBN 978-9939-843-15-5

© Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2014
© Կարապետյան Սամվել, 2014

ԿԱՊՈՒՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Տեղադրություն. գտնվում է Աբովյան քաղաքից 8 կմ արևելք՝ Հատիս լեռան արևմտյան ստորոտին՝ Կոտայք և Հատիս գյուղերի միջակայքում: Ծովի մակերևույթից բարձր է 1695-1784 մ:

Անվանում. գյուղի պատմական անունը մոռացության է մատնվել: ԺԹ դարի վավերագրերում հանդիպում է եկվոր թյուրքական ցեղերից ժառանգված օտարոտի՝ Գյոյքիլիսա կամ Գյոգքիլիսա անվանումով, որը թարգմանաբար նշանակում է կապույտ եկեղեցի և պայմանավորված էր գյուղամերձ բլրի գագաթին եղած եկեղեցու քարի գույնով:

Պատմություն. գյուղի սկզբնավորման ժամանակաշրջանի մասին տեղեկություններ չունենք, սակայն գյուղում և մերձակայքում պահպանված նյութական մշակույթի հուշարձանների ուսումնասիրությունը վկայում է, որ այն զուտ հայաբնակ է եղել առնվազն վաղ միջնադարից և առանձնապես բարգավաճ շրջան թևակոխել ԺԴ-ԺԶ դարե-

Կապուտան գյուղը հյուսիսից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)



Կապուտան գյուղի գլխավոր հատակագիծն ըստ Google Earth (2013 թ.) արբանյակային լուսանկարի (հրատարակության պատրաստեց Ա. Հակոբյանը, 2014 թ.)

Կապուտան գյուղը տիեզերքից (լուս.՝ Google Earth, 2013 թ.)

ղում: Գրեթե իսպառ ամայացել է 1604 թ. շահաբասյան բռնագաղթի հետևանքով, սակայն քիչ անց կրկին շենացել է և հակառակ պատմության հասցրած հետագա՝ որոշ դեպքերում ծանր հարվածների (օրինակ՝ 1905-1907 թթ. հայ-թուրքական ընդհարումները)՝ պահել է իր անսասան գոյությունը:

Բնակչություն. 1830-ական թվականներից ի վեր անցկացված մարդահամարների արդյունքները ցույց են տալիս, որ բնիկ հայերից զատ, թերևս օգտվելով խանական տիրապետության խտրական հովանավորչությունից, գյուղում բնակություն են հաստատել նաև թյուրքական ծագմամբ մահմեդական ցեղեր: Ուշագրավ է, որ վերջիններս իրենց հրաշալի էին զգում նաև ցարական Ռուսաստանի տիրապետության օրոք:

Կրթական խնդիրների առնչությամբ 1913 թ. մարտի 29-ին Գևորգ Ե կաթողիկոսին գրված մի զեկուցագրում նշվել է. «...երկու ազգութիւնով է բնակուած՝ հայ և թուրք, և, որ գլխաւորն է՝ հեռու կրթական ասպարէզից և լուսաւորութիւնից»[1]: Արդեն խորհրդային առաջին տասնամյակներին նախկին թուրքերը, վերախմբագրվելով իբրև ադրբեջանցի, գլխավորապես փոխադրվում են Ադրբեջանական ԽՍՀ:

1 ՀԱԴ, ֆ. 57, ց. 2, գ. 251, թ. 93:

Ինչ վերաբերում է գյուղի բնիկներին, ապա գոնե վերջին՝ ավելի քան 170 տարիների ընթացքում նրանց թվաքանակն առավելագույն ցուցանիշին է հասել 1930-ական թթ., և հուրախություն բոլորիս՝ արձանագրելի է, որ վերջին տարիներին էլ նկատելի աճելով՝ գրեթե մոտեցել հիշյալ մակարդակին:

Ասվածն ավելի առարկայական դարձնելու համար ստորև ներկայացնում ենք վիճակագրական տվյալների համադրման արդյունքում ստեղծված աղյուսակը.

տարեթիվ	հայ		թուրք		ընդամենը	
	տուն	շնչ.	տուն	շնչ.	տուն	շնչ.
1839[2]	6	31	20		26	
1842[3]	8		9		17	
1859[4]	34	259	15	193	49	452
1869[5]	35					
1873[6]					78	660
1886[7]					96	
1893[8]	51	396	45		96	
1897[9]						1003
1908[10]						821
1909[11]		670				
1914[12]						1390
1926[13]						1110
1931[14]		1258		170	277	1428
1937[15]						1425
1939[16]						1574
1959[17]						1119
1970[18]						1073
1979[19]						1050
2001[20]						1312
2004[21]						1374
2011[22]						1210

Գյուղի էջմիածնապատկան հողերը. հայտնի է, որ Մայր Աթոռն այս գյուղում ունեցել է որոշակի կալվածքներ, որոնք յուրաքանչյուր տարի որոշակի եկամուտներ էին ապահովում: 1909 թ. վերջին Էջմիածնի սինոդը որոշում է վանքապատկան «...Գեօկքիլիսայի կալուածը կապալով տալ նախկին կապալառու Երևան քաղաքի բնակիչ Սարգիս Տէր-Գաբրիէլեանին երեք տարի ժամանակով, տարեկան 240 ռուբլով»[23]:

Մեկ տարի անց՝ 1910 թ. օգոստոսի 23-ին, վանական կառավարության նախագահ Ներսես վարդապետ Մելիք-Թանգյանը խնդրագրով դիմում է Մատթեոս Բ կաթողիկոսին գյուղի վանքապատկան հողերն աճուրդով տալու համար[24]:

Ինչպես երևում է, Մայր Աթոռն ի վիճակի չի լինում պատշաճ կերպով տնօրինելու իրեն պատկանող հողերը, իսկ գյուղացիներն էլ բնականաբար փորձում են օգտվել անտերունչ կալվածքից, բայց ահա հայտնվում է հողատերը և հարկեր պահանջում: Համենայն դեպս, 1913 թ. մարտի 29-ին Գևորգ Ե կաթողիկոսին հղված գրության մեջ այս խնդրի առնչությամբ նշվել է, որ գյոքքիլիսացիները «...իւրեանց կոպիտ քայլերով, ինքնագլուխ վարել են Ս. Էջմիածնապատկան հողերը և ցանել են մօտ 15 1/2 դես., որի համար արդէն կատարողական թերթով պահանջւում է աղքատիկ ու թշուառ հասարակութիւնից 985 ր. և ծախսերը: ...աղերսում ենք ու պաղատում... գթալ նեղսակիր և սովատանջ հասարակութեան մանրիկներին, խնայել հասարակութեան վերայ դրած 985 ր. և ծախսերը, որովհետև այս քանի տարուան անմիտ պարտքերով մեր գիւղի հասարակութիւնը ծանրաբեռնուած է եղել և իզուր անցել մեր բոլոր ջանքերը: Դորանով ապացոյց և ձմերուայ երկարութիւնը, որ չկարողացանք գարնանը հանել առողջ անասունները, ընկած ենք միանգամայն թշուառ ու աղքատ վիճակի մէջ: ...աղաչում ենք..., որպէսզի ...մեր խղճուկ հասարակութիւնը ազատուի, շնորհիւ յանուն սրբազնասուրբ քահանայապետիդ քաղցր ուշադրութեամբ, շինականներիս վերայ դարսուած պարտքից»[25]:

Թեև վավերագրից չի երևում գործի շարունակությունը, սակայն մնում է

2 ՀԱԴ, ֆ. 56Պ, ց. 12, գ. 10, թ. 5 (ի դեպ, 31 շնչից 16-ն արական էին, 15-ը՝ իգական): Տե՛ս նաև **Շահխաթունեանց Յ.**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Էջմիածին, 1842, էջ 162:

3 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 81, մաս III, թ. 1բ (ի դեպ, նշյալ թվականին արձանագրվել է միայն արական շունչը, որի համաձայն՝ 19-ը հայ էր, 36-ը՝ մահմեդական):

4 ՀԱԴ, ֆ. 267, ց. 1, գ. 13, թ. 2-15 (ընդ որում, հայերը բաղկացած էին 137 ար., 122 իգ., իսկ մահմեդականները՝ 104 ար., 89 իգ. շնչից):

5 ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 42, թ. 3:

6 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 195, թ. 3: Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, Երևան, 2008, էջ 108:

7 ՀԱԴ, ֆ. 93, ց. 1, գ. 195, թ. 3:

8 **Էփրիկեան Ս.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903-1905, էջ 707:

9 ՀՀ բնակավայրերի բառարան, նույն տեղում:

10 Кавказский календарь на 1910 г., Тифлис, 1909, отд. IV, с. 222.

11 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 284: Տե՛ս նաև ֆ. 48, ց. 1, գ. 299, թ. 3 շրջ. (ընդ որում, միայն հայերը բաղկացած էին 360 ար., 310 իգ. շնչից):

12 Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, отдел статистический, с. 109.

13 ՀՀ բնակավայրերի բառարան, նույն տեղում:

14 ՀՍԽՀ բնակավայրերի ցուցակ. բնակավայրերն ու ազգաբնակությունը, Երևան, 1936, էջ 39:

15 ՀԱԴ, ֆ. 163, ց. 23, գ. 141, թ. 27 (ընդ որում, 733 ար. և 692 իգ.):

16 ՀՀ բնակավայրերի բառարան, նույն տեղում:

17 Նույն տեղում:

18 Նույն տեղում:

19 Նույն տեղում:

20 Նույն տեղում (ընդ որում, 656 ար., 656 իգ.):

21 Նույն տեղում:

22 ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքները. Կոտայքի մարզ, Երևան, 2013, էջ 10:

23 «Արարատ», 1909, էջ 895:

24 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ը, Երևան, 2001, էջ 805:

25 ՀԱԴ, ֆ. 57, ց. 2, գ. 251, թ. 93 և շրջ.:



Սբ. Մինաս եկեղեցին հյուսիս-արևմուտքից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Պաուլո Կումեռոյի, 1978 թ.)

հուսալ, որ Գևորգ Ե Վշտալի կաթողիկոսն այնքան էլ չի վշտացրել սեփական հոտի անդամներին:

Սբ. Հովհաննես եկեղեցի. հայտնի է, որ նախքան խորհրդային տարիները գյուղի միակ ծխական եկեղեցին էր: Գտնվում էր գյուղամիջի աղբյուրի մոտ:

Եկեղեցու մասին պահպանված գրավոր առաջին հիշատակություններից մեկը 1839 թ.-ից է. «Կեօք քիլիսէ. եկեղեցին յանուն սուրբ Յովհաննու»[26]:

1940-ական թթ. վերջերից այլևս գոյություն չունեցող վաղմիջնադարյան եկեղեցու մասին տակավին 1947 թ. նշվել է. «...քանդված էր արևմտյան պատը, հյուսիսայինը քանդել և շարել են հեղեղատը, պահպանված էր արևելյան և հյուսիսային պատերի կրաշաղախ միջուկի որոշ մասերը 1/2 մ բարձրությամբ»[27]:

1886 թ. Սբ. Հովհաննես եկեղեցին ենթարկվել է մասնավոր նորոգությունների: Այդ առթիվ նույն թվականի հոկտեմբերի 27-ին Կոտայքի գործակալ ավագ քահանա Հովհաննես Մելիք-Գևորգյանը Երևանի թեմի հայոց կոնսիստորիային գրել է. «...ի 26-ն հոկտեմ. անձամբ ներկայացայ ի գիւղն Գեօկքիլիսայ՝ ի պատճառս նորոգութեան խաչկալի եկեղեցւոյն, ընթերցայ պղծեալ տաճարի, օծեցի զպատկերս սբ. Աստուածածնի և սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի»[28]:

Ըստ ամենայնի, հիշյալ նորոգությունից հետո եկեղեցին վերաօծմամբ անվանափոխվել է: Համենայն դեպս, արդեն 1909 թ. հիշվում է Սբ. Աստվածածին անվամբ[29]:

Քահանաներ. Սբ. Հովհաննես (Սբ. Աստվածածին) եկեղեցուն սպասավորած ծխատեր քահանաներից հիշվում են տաճկահպատակ Գաբրիել Տեր-Սահակյանը և տեր Գասպարը (1867 թ.)[30], Գրիգոր քահանա Մանուկյանը (հիշվում է 1909 թ., ծնվ. 1869 թ. ձեռն. 1905 թ.)[31]:

Սբ. Մինաս եկեղեցի. գտնվում է գյուղի հյուսիսային եզրին՝ բլրի գագաթին: Եկեղեցու՝ 1839 թ. տրված նկարագրությունից հետևում է, որ նշյալ թվականին այն դեռևս միանգամայն կանգուն էր. «Մերձ յայս գիւղ յարև-

26 **Շահխաթունեանց Ց.**, նույն տեղում:

27 ՀԱԴ, ֆ. 1063, ց. 1, գ. 1403, թ. 7:

28 ՀԱԴ, ֆ. 47, ց. 1, գ. 260, թ. 1:

29 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 299, թ. 3 շրջ.:

30 ՀԱԴ, ֆ. 47, ց. 1, գ. 157, թ. 47:

31 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 336:

Սբ. Մինաս եկեղեցին հյուսիսից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

մտից ի վերայ բլրակաձև առապարի՝ յստորոտի անդ լերինն Շամիրամայ է փոքրիկ տաճար գեղեցկաշէն սրածայր կաթուղիկէիւ, այլ չունի գրուած ինչ հայացի կամ անուանակոչութիւն. ուստի ի տաճկական լեզու վերածայնի յայն անուն»[32]:

Ըստ շինարարական արձանագրության, որը պարունակում է սոսկ տարեթիվը, կառուցվել է 1349 թ.: Ի դեպ, 1947 թ. նշվել է, որ կառուցման տարեթիվը փորագրված է եղել 2-րդ հարկի արևմտյան պատի հյուսիսային եզրի՝ գետնին ընկած քարերից մեկին[33]:

Հարկ է նշել, որ Սբ. Մինաս եկեղեցին իր հորինվածքով այն սակավաթիվ

Սբ. Մինաս եկեղեցու կառուցման տարեթիվը (լուս. և գրչ.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

հուշարձաններից է, որոնք հայ քրիստոնեական պաշտամունքային ճարտարապետության մեջ ի հայտ եկան միայն ԺԴ դարի առաջին կեսին և, ըստ էության, մեկ կառույցի մեջ մեկտեղում են երեք նշանակության շինություններ՝ դամբարան-եկեղեցի-զանգակատուն: Ընդ որում, Կապուտանի Սբ. Մինաս եկեղեցին համահորինվածք հուշարձանների շարքում վերջինն է, քանի որ մյուս երեքը փոքր-ինչ ավելի վաղ ժամանակների կառույցներ են (Եղվարդի Սբ. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1321 թ., Նորավանքի Բուրթելաշեն Սբ. Աստվածածինը՝ 1339 թ., իսկ Գոշավանքի համահորինվածք եկեղեցին էլ՝ ԺԴ դարի սկզբին):

Ի դեպ, սույն հորինվածքը, ի դեմս, օրինակ, Բենիձորի Մեծ վանքի գլխա-

32 Շահխաթունեանց Յ., նույն տեղում:
33 ՀԱԴ, ֆ. 1063, ց. 1, գ. 1403, թ. 6:

Սբ. Մինաս եկեղեցին հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

վոր եկեղեցու (1663 թ.), ունեցել է նաև իր ուշմիջնադարյան դրսևորումները:

Հայտնի է, որ Սբ. Մինաս եկեղեցին կանգուն էր մինչև 1920-ական թթ. «Հուշարձանը քանդվել էր մեր դարի 20-ական թվականներին և մոտ 60 տարի մնացել էր առանց խնամքի»[34]:

Վերականգնողական աշխատանքներն իրականացվել են 1981-1983 թթ. ընթացքում Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության ընկերության միջոցներով՝ համաձայն ճարտ. Գ. Ղաֆադարյանի նախագծի[35]:

34 **Թամանյան Յու.**, Կապուտանի եկեղեցու վերականգնումը, «Էջմիածին», 1985, Բ-Գ, էջ 61:
35 Նույն տեղում:



Երկրորդ հարկի հատակագիծը



Առաջին հարկի հատակագիծը

0 1 2 3 մ

Ի տարբերություն համահորինվածք մյուս հուշարձանների՝ Սբ. Մինաս եկեղեցին արտաքուստ աչքի է ընկնում ավելի զուսպ, մինչև իսկ խիստ լուծումներով, որտեղ հարդարանքի տար-



Սբ. Մինաս եկեղեցին հյուսիս-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Սբ. Մինաս եկեղեցին հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

ները հասցված են նվազագույնի: Հանգամանք, որը թերևս պայմանավորված է եղել կառույցի համեմատաբար փոքր չափերով և քարի՝ ավելորդ պճնանք չհանդուրժող կապտամոխրագույն երանգով[34], որտեղ արդեն նաև որպես զարդ է ընկալվում ելնդագեղագիր տարեթիվը.

ՉՂԸ (1349):

Գերեզմանոց. Կապուտանի պատմական հուշարձանների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում գյուղի բավականաչափ ընդարձակ գերեզմանոցի միջնադարյան հատվածը: Այստեղ մի քանի հարյուր անմշակ սալատապանների կողքին առկա են նաև երեքից չորս տասնյակ բազմաձև (ուղղանկյունաձև, վրանաձև, օրորոցաձև) տապանաքարեր և մեկ տասնյակից ավելի գեղաքանդակ խաչքարեր: Գերեզմանական հուշարձանների թվում պահպանվել են նաև արձանագիրները, որոնցից հները, ըստ գրչա-

34 Ինչպես կապուտանցիներն են վկայում, ի թիվս բազմաթիվ այլ շինությունների, նույն քարհանքի քարով է կառուցվել նաև Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքը:

Հատվածներ եկեղեցու երկրորդ հարկի արևմտյան և առաջին հարկի արևելյան ճակատներից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

գրական առանձնահատկությունների, կարելի է թվագրել ԺԴ դարով:

Ստորև ներկայացնում ենք այն բոլոր արձանագրությունները, որոնք, շնորհիվ իրենց՝ համեմատաբար ավելի բարվոք պահպանվածության, հաջողությամբ վերծանվեցին.

Խաչքար, ստորին մասում՝ 4 տող.

Կանգնեցաւ խաչս բարէ/խաւսութեան Յոլաւ/ագին, իւր հաւրն տեառ/ն մագին (՞) մենաւագին:

Խաչքար՝ պատվանդանի մեջ, գեղաքանդակ, ստորին մասում՝ 4 տող.

Կանգն/եցաւ խա/չս ի բարեխաւսութե(ա)ն / Մխիթարիչին, որդոյ նորայ գրչին:

Տապանաքար, ուղղանկյունաձև, վերնամասում՝ 1 տող.

Այս է հանգիստ Ավաքին, թվ(ին) ՌՃԽԱ (1692):

Տապանաքար, ուղղանկյունաձև, հյուսիսային երեսին՝ 2 տող.

Այս է տապան Ակոբի որդի Գրիգորին, որ փոխեցաւ առ ա(ստուա)ծ / ի

Հատված Սբ. Մինաս եկեղեցու ներքին ծավալներից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

ղեկտ(եմ)բ(ե)ր ամսի, ի Թ (9) օրն շ(ա)-բ(աթ), թվի(ն) ՌՃԽԳ (1694):

Տապանաքար. հարավային երեսին՝ պատկերաքանդակներ, որոնց վերին եզրով փորագրված է 1 տող.

Այս է հանգիստ Ամիրխանի, թվին ՌՃՁԱ (1732):

Տապանաքար. արձանագրությունը՝ 2 տող.

Այս է տապան Ակոբի (որդի) | Օվանէսին, թվին ՌՃՁԳ (1734):

Տապանաքար. արձանագրությունը՝ 3 տող.

Այս է տապան | Յակոբին, | թվ(ին) Ռ...:

Տապանաքար, օրորոցաձև, արձ.՝ 2 տող.

Այս է տ(ա)պան ...ոցի տ(է)ր | Սարգսի որդի Նիկողոսին:

Տապանաքար. արձանագրությունը՝ 4 տող.

Անբուժ ցաւի հանդիպեցայ, | զուր փորձանօք քարկոծեցայ, | տիրացու Բարսեղ Պողոսեան անուանեց(ա)յ, | 24 ամաց վախճանեցա, 1867 թվին:





Կապուտանի Սբ. Մինաս եկեղեցին կրկնող հորինվածքները (եկեղեցի Գոշավանքում, ԺԴ դարի սկիզբ, Եղվարդի Սբ. Աստվածածինը, 1321 թ. և Նորավանքի Բուրթելաշեն Սբ. Աստվածածին եկեղեցին, 1339 թ.)

Տապանաքար. արձանագրությունը՝ 5 տող.

Աստ հանգիստ դնի մարմին Եղիազարի, որ է որդի / Գրիգոր Պողոսեանի, ծառայող կանգոզոր կայ/սերի, քսանութ ամեայ հասակի, ով անցաւոր, / դուք ողորմի ասէք այս պատանոյս, / հանգեաւ ի տէր, ամէն, 1891 ամի, մարտի 28:

Տապանաքար, ուղղանկյունաձև., արձ.՝ 7 տող.

Այս է տապանն / Ղազար Խաչատր/եանի, ծառայող / զինուոր կայսե/րի, վաղճանե/ցաւ քաջ պատա/նի, 1899 ամի:

Տապանաքար. օրորոցաձև, հարավային երեսին՝ 3 տող.

Աստ դնի մարմին հանգուցեալ Մանուկ Աս/լանեանի, որ փոխեցաւ առ Ք(րիստո)ս, 50 համեա հասա/կաւ թողեալ ...ինչս աշխարհի, վախ. ի 1907 ամ, 1 օգոս.:

Կապուտանը հայտնի է նաև գյուղամերձ մի քանի հնավայրերով, որոնցից են միջնադարյան խաչքարեր պարունակող երկու փոքրիկ գերեզմանոցները:

Կապույտ խաչքար. գտնվում է գյուղի հարավային եզրին՝ տներից մեկի բակում: Թվագրվում է ԺԲ-ԺԳ դդ.: 1947 թ. կից ընկած էին Սբ. Մինաս եկեղեցու սյան խոյակը կամ խարիսխը և արձանագիր մի քարաբեկոր[37]:

Խաչքարերի բեկորներ. գտնվում են գյուղի հյուսիսային կողմում՝ Հատիս տանող ճանապարհի եզրին: Թվագրվում են ԺԲ-ԺԳ դդ.[38]:

37 ՀԱԴ, ֆ. 1063, ց. 1, գ. 1403, թ. 7:
38 Նույն տեղում:

ԺԶ-ԺԷ դարերի տապանաքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Կապուտանի գերեզմանոցի միջնադարյան հատվածը և ԺԴ-ԺԶ դարերի խաչքարեր (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
Ֆանտան
Լուսակերտ
Գութանասար, 2299
Նուռնուս
Ջրաբեր
Դիլաքրան
Սեւ Կատար, 3225
Հատիս
Կապուտան
Նոր Գեղի
Բյուրեղավան
Հատիս, 2529
Զովաշեն
Նոր Հաճն
Արզնի
Ակնասար, 3258
Ակնա լիճ, 3032
Կոտայք
Պողոս-Պետրոս
Սեւաբերդ
ԱԲՈՎՅԱՆ
Ակունք
Սեւաբերդ
Պտղնի
Նորգյուղ
Գետամեջ
Բալահովիտ
Զառ
Կաթնաղբյուր
Քանաքեռավան
Արամուս
Մայակովսկի
Կամարիս
Առինջ
Գեղաշեն
Ազդահակ, 3597
Գետառ
Ջորաղբյուր
Զովք
ԵՐԵՎԱՆ
Ջրվեժ
Ողջաբերդ
Գեղադիր
Գեղարդ
Գեղարդավանք
Գողթ
Հացավան
Գառնի

Յուրաքանչյուր ազգի պատվաբեր պարտքն է ճանաչել հարազատ օրրանը և ուսումնասիրել Հայրենիքում արարված նախնյաց հիշատակները:

Հայոց Հայրենիքում պատմական հուշարձանները հազարամյակների ընդգրկում ունեն և անհամրելի քանակով ու մեծ խտությամբ տեղաբաշխված են Հայկական ողջ բարձրավանդակում:

Ի տարբերություն բազում ազգերի, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է հայրենի նյութական մշակույթի հուշարձաններին առնչվող ուսումնասիրական տարաբնույթ աշխատանքներ և լուծում նաև դրանց պահպանության խնդիրները, մեր պարագայում նույնն անելու հնարավորությունը հիմնականում սահմանափակված է Հայոց Հայրենիքի՝ սոսկ հայկական պետականության սահմանների ներքո գտնվող տարածքում, ինչպես նաև որոշ պատմական գաղթավայրերում: Այսինքն՝ պատմական անցքերի բերումով հայ ազգի ներկա սերնդին է ժառանգվել մի իրականություն, որն էապես տարբերվում է շատ ու շատ ազգերի առջև նույն ոլորտում ծառացած խնդիրներից:

Այո՛, հեշտ չէ նախնյաց հիշատակներին հետամուտ լինել մանավանդ ցեղասպանության ճանապարհով Հայրենիքիդ տիրացած օտար պետության տարածքում:

Հայրենիքը, անկախ նրա բռնազավթված կամ ազատագրված լինելու իրողությունից, սրբազան է, որտեղ պատմական հուշարձաններն էլ հավաքական առումով Երկիր մոլորակի տվյալ հատվածը հայ ազգին ի բնե վերապահված լինելու մասին ազդարարող «գրանցման վկայականներ» են, որոնք իրենց իսկ գոյությամբ էլ մատնում են պատմական իրականությունը և դրանով անհանգստություն պատճառում որոշ զավթիչ հարևանների:

Ահա այս ըմբռնումների և պարտականությունների գիտակցման թելադրանքով էր, որ սկսած 1969 թվականից՝ ճարտարապետ Արմեն Հախնազարյանը լծվում է Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի պատմական հուշարձանների փաստագրման գործին և ժամանակի ընթացքում առաջ մղելով աշխատանքները՝ 1982 թ. Գերմանիայի Ախեն քաղաքում հիմնում «Հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող» հասարակական կազմակերպությունը:

Տարեցտարի լայնացնելով իրականացվող աշխատանքների ծավալները՝ արդեն 1996 թ. կազմակերպությունը պաշտոնական գրանցում է ստանում ԱՄՆ-ում (Լոս Անջելես), իսկ 1998 թ.՝ նաև Հայաստանի Հանրապետությունում (Երևան): Վերջինս նախ 2000 թ. վերագրանցվում է, իսկ 2010 թ., անփոփոխ պահելով անվանումը, վերակազմավորվում որպես հիմնադրամ:

45-ամյա գործունեության ընթացքում (1969-2014) հիմնադրամն իրականացրել է շուրջ 240 գիտարշավներ դեպի Պատմական Հայաստանի տարբեր շրջաններ, գավառներ և պատմական գաղթավայրեր:

Ստեղծվել է արդեն 400.000 միավորի սահմանագծին մոտեցող թվայնացված պատկերների շտեմարան, որի մաս են կազմում մի քանի հազար չափագրություններ, գրաֆիկական և քարտեզագրական նյութեր:

Ստեղծվել է նաև բնակավայրերի պատմությանն առնչվող տվյալների հատուկ շտեմարան, որն արդեն իսկ հնարավորություն է ընձեռում հյուսելու Մեծ և Փոքր Հայքերի տարածքում գտնվող ցանկացած բնակավայրի պատմությունը:

ՀՃՈՒ հիմնադրամը, սկսած 1997 թ.-ից, ձեռնամուխ է եղել ավարտված ուսումնասիրությունների հրապարակման գործին, որով և անցած տարիներին լույս են ընծայվել ավելի քան 60 միավոր գրքեր, գրքույկներ, քարտեզներ և տպագիր այլ նյութեր:

2006 թ.-ից ի վեր հիմնադրամը ստեղծում է նաև վավերագրական ֆիլմեր:

Ինչպես հրատարակությունները, այնպես էլ վավերագրական ֆիլմերը զետեղված են համացանցում:

Գրքի ստեղծման և տպագրության հովանավոր
ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

http://www.armenianarchitecture.am http://www.raa.am RAA Armenia raayer@sci.am (37410) 52 15 25

Տպագրված է «Բյուրակն» հրատարակչատանը
ԵՐԵՎԱՆ
ՀՃՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄ
2014